



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-7-Ե-8
2018թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բարայանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Հարթենյանի, Ս. Չիչոյանի,
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,
Հ. Փանոսյանի*

քարտուղարությամբ՝

Գ. Նիկողոսյանի

2018 թվականի մարտի 23-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի վարչական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Արթուր Ռոբերտի Պողոսյանի թեկնածությանը:

2. Արթուր Ռոբերտի Պողոսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՍԿՐՏՈՒՄՅԱՆ